ArmLur.am

I SSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

# Ժողովուրդ

25 հուլիսի երեքշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

107
(2773)

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

## ԳՈՎԱԶԴԻ ՈԼՈՐՏԸ ԿԼԱՆԻ ՁԵՌՔՈՒՄ Է






Երեւանի կենտրոնում՝ Հյուսիսային պողոտայի սկզբի հատվածում, գովազդային մեծ վահանակ է տեղադրվել: Վահանակը տգեղ ու անճաշակ դիզայն ունի եւ անգամ Երեւանի ավագանու «Իմ քայլը» խմբակցության անդամներն են սկսել զայրանալ հրապարակավ: Երեւանի ավագանու «Իմ քայլը» խմբակցության անդամ Արսեն Կարապետյանը՝ Շուրը, հրապարակային կոշտ գրառում է արել՝ քննադատելով վահանակի դիզայնը՝ «աննկարագրելի ուռոդություն» անվանելով, որը խանգարում է քաղաքացիներին: Իհարկե, անգամ ՔՊ-ականների քննադատություններն են անիմաստ, քանի որ Զարգացման եւ ներդրումային ծրագրերի վարչության պետ Արմեն Հարությունյանը, որը գովազդի ոլորտի պատասխանատուն է, շուկայում իր «մաֆիան» է ձեւավորել: Արմեն Հարությունյանը, լինելով ՀՀԿ կադրերից, ավելի կոնկրետ՝ Երեւանի նախկին քաղաքապետ Գագիկ Բեգլարյանի մտերիմը, հիմա կարողացել է նոր շրջապատ ձեւավորել իր համար: Նա մտերմացել է ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանի եղբոր, Երեւանի ավագանու անդամ Արմեն Հարությունյանի եւ վերջերս Քաղաքաշինության, տեխնիկական եւ հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավար նշանակված Գարեգին Խաչատրյանի հետ: Կարելի է ասել, որ մայրաքաղաք Երեւանի գովազդային վահանակների ոլորտը փաստացի ղեկավարվում է այս եռյակի կողմից, իսկ իրավական հարցերը համակարգում է Երեւանի փոխքաղաքապետ Սուրեն Գրիգորյանը: Սա է պատճառը, որ անգամ ՔՊ-ականների բողոքները դառնում են «ձայն բարբառո յանապատի»:



ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը այս տարվա հունիսից փոխել է աշխատավայրը՝ տեղափոխվելով Բաղրամյան 26՝ՀՀ նախագահի նստավայր: Բանն այն է, որ կառավարության շենքում հերթական վերանորոգումն է իրականացվում: Հիշեցնենք, որ դեռեւս 2019 թվականին էր կապիտալ վերանորոգվել այդ շենքը՝ծախսվելով 124.5 մլն դրամ կամ մոտ 325 հազար ԱՄՆ դոլար: Իհարկե, դրանից հետո էլ բազմաթիվ փոփոխություններ ու վերանորոգումներ է տեսել կառավարության այս մասնաշենքը. անցած տարեվերջին տեղադրվել է մոտ 16 մլն դրամանոց վերելակ, գնվել են թանկարժեք գորգեր, մարմարյա սալիկներ: Եվս 17,5 մլն դրամ էլ տրամադրվել էր կառավարության աշխատակազմի շենքի ջեռուցման համակարգի նորոգման համար: Եւ այսքանից հետո կրկին հայրենի իշխանությունները որոշել են վերանորոգման աշխատանքներ անել: Ինչպես երեւում է, Նիկոլ Փաշինյանն իրեն Բաղրամյան 26-ում շատ ապահով է զգում, եւ չի բացառվում՝ որոշի կրկին հաստատվել այդ մասնաշենքում: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ Փաշինյանին նրա անվտանգության աշխատակիցներն ասել են, որ կառավարության շենքի մոտ հաճախակի իրականացվող բողոքի ակցիաները շատ մոտ են լինում, եւ շենք մտնելն ավելի հեշտ է, ինչի համար էլ Փաշինյանն իրեն Բաղրամյան 26-ում ապահով է զգում: Բայց այդ իրավիճակում անհարմարություններ են առաջացել ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանի մասով, քանի որ հենց նրա աշխատասենյակում է տեղավորվել է Նիկոլ Փաշինյանը. Խաչատուրյանը այլ աշխատասենյակ է գնացել: «Ժողովուրդ» օրաթերթը վարչապետի աշխատակազմից փորձեց պարզել, թե երբ կավարտվի Կառավարության շենքում վարչապետի աշխատասենյակի վերանորոգումը, ու արդյոք նպատակ ունի Փաշինյանը մնալ Բաղրամյան 26-ում: «Վարչապետի աշխատակազմի վարչական շենքում ներկայումս ընթացող նորոգման աշխատանքների պայմանագրերը օրենսդրությամբ սահմանված կարգով հրապարակվել են... Վերանորոգման աշխատանքների ավարտից հետո վարչապետը գործունեությունը կշարունակի Կառավարության շենքում»,-փոխանցեցին կառավարությունից: Ըստ մեզ տրամադրած տեղեկատվության՝ վերանորոգումը սկսվել է 2023 թվականի մայիսի 8-ին եւ ավարտին կհասցվի սեպտեմբերի 5-ին: Նիկոլ Փաշինյանը այն նույն Բաղրամյան 26-ում է, որը 2018-ի հեղափոխությունից հետո բացել էր իր դռները եւ հայտարարում էր, թե Բաղրամյանի այգում կարող են քաղաքացիները զբոսնել, իսկ հիմա ճաղավանդակները նորից զոդված են:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը հակված է չմասնակցելու Երեւանի ավագանու ընտրություններին. որոշումը ԲՀԿ ղեկավար Գագիկ Ծառուկյանինն է: Ավելին՝ մեր հավաստի տեղեկություններով՝ Երեւանի ավագանու «Լույս» եւ «Բարգավաճ Հայաստան» խմբակցությունների անդամները քննարկումների արդյունքում նախապես պայմանավորվածություն են ձեռք բերել, որ Երեւանի ավագանու ԲՀԿ խմբակցության անդամներ Մարկոս Հարությունյանը եւ Միքայել Մանրիկյանը կընդգրկվեն ԼՀԿ ցուցակում՝ 2-րդ եւ 4-րդ համարներով, եւ նրանց ցուցակով կմասնակցեն ավագանու ընտրություններին, սակայն ավելի ուշ ԲՀԿ-ականները հրաժարվել են անգամ այդ ֆորմատով մասնակցել ընտրություններին: Մեր տեղեկություններով՝ հենց Գագիկ Ծառուկյանն է իր թիմակիցներին հորդորել, որ չմասնակցեն ԼՀԿ-ի ցուցակով, ավելին՝ ասել է, որ օգնեն ՔՊ-ի քաղաքապետի թեկնածու Տիգրան Ավինյանին: Այս հարցերի շուրջ մեկնաբանություն ստանալու համար «Ժողովուրդ» օրաթերթը կապ հաստատեց ԲՀԿ ղեկավար Գագիկ Ծառուկյանի մամուլի քարտուղար Իվետա Տոնոյանի հետ: Վերջինս նշեց, որ Գագիկ Ծառուկյանի գլխավորությամբ ԲՀԿ քաղաքական թիմը շարունակում է քննարկումները Երեւանի ավագանու ընտրություններին մասնակցության վերաբերյալ հարցով: «Այս օրերին մենք հանդիպումներ ենք ունենում Երեւան քաղաքի տարածքային կառույցների, կուսակցական ակտիվի ներկայացուցիչների հետ, եւ երբ քննարկումներն ավարտվեն, ԲՀԿ-ն հանդես կգա համապատասխան հայտարարությամբ: Ինձ համար այլեւս նորություն չէ, որ ժամանակ առ ժամանակ, ավելի ստույգ՝ պարբերաբար, տարատեսակ շրջանակների կողմից ԲՀԿ-ին կամ Գագիկ Ծառուկյանին շահարկող տարատեսակ ինֆորմացիաներ են շրջանառության մեջ դրվում, սակայն ավելի գրագետ եւ պրոֆեսիոնալ եմ համարում կոչ անել հավատալ բացառապես այն հայտարարություններին, որոնք պաշտոնական բնույթ են կրում: ԲՀԿ պաշտոնական դիրքորոշումների մասին հայտարարություն կարող է անել բացառապես պարոն Ծառուկյանը կամ նրա կողմից լիազորված քաղաքական թիմի անդամներից որեւէ մեկը, իսկ մինչ այդ կասկածելի աղբյուրներից ծնունդ առնող ինֆորմացիաներին հորդորում եմ արժանահավատորեն չվերաբերվել»,-ասաց նա:



Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Տրդատ Սարգսյանը 2021 թվականին երկու բնակարան է գնել եւ մեկ ավտոկայանատեղի: ՔՊ-ական այս պատգամավորի գործերն էլ են լավ: Նշենք, որ երկու բնակարաններն էլ գնվել են նույն օրը՝ փետրվարի 11-ին, իսկ կայանատեղին գնվել է մի քանի օր անց՝ փետրվարի 15-ին: Բացի այդ, նա Ավանում եւս մեկ բնակարան ունի, որը նա գնել էր դեռ 2017 թվականին, եւ Եղեգնաձոր քաղաքում ունի հողամաս: Արդեն 2022 թվականի ապրիլի 25-ին նա գնել է 2021 թվականի արտադրության Wolkswagen մակնիշի ավտոմեքենա: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ ՔՊ-ական պատգամավորն այդ ավտոմեքենան գնել է 17 մլն 860 հազար դրամով «Էլեկտրական մեքենաների էվոլուցիոն ընկերություն» ՍՊԸ-ից: Բանկային հաշիվներին տարվա վերջում նա ունեցել է 1500 եվրո, 18 հազար դոլար եւ 1 մլն 300 հազար դրամից ավելի գումար: Իսկ, ահա, նրա կանխիկ դրամը կազմել է 7 մլն 195 հազար դրամ, 253 հազար ռուբլի, 4 մլն 468 հազար դրամ, 7 400 դոլար, 8560 եվրո: Մեկ տարվա ընթացքում նա 51 մլն դրամ է վաստակել, որից 7 մլն դրամը նրա աշխատավարձն է, 73 000 եվրոյի եւ 23 մլն դրամ եկամուտի աղբյուրները նշված չեն, իսկ 6 մլն դրամ էլ ստացել է գույքը օտարելուց: Խոսքն ավտոկայանատեղիի մասին է, որը նա վաճառել է: Հիշեցնենք, որ Տրդատ Սարգսյանը նախկինում Վայոց ձորի մարզպետն էր եւ ազատվել էր աշխատանքից մի աղմկահարույց պատմությունից հետո: Մասնավորապես, Տրդատ Սարգսյանը հրաժարական էր ներկայացրել Վայոց ձորի մարզպետի պաշտոնից փոխգնդապետ Արա Մխիթարյանին դաժան ծեծի ենթարկելու միջադեպից հետո: Փոխգնդապետի հարազատները պնդում են, որ նա ներկա է եղել միջադեպին եւ չի դադարեցրել ծեծկռտուքը:

ԶՐՈՒՅՑ

# ԱՀ ՊԵՏՆԱԽԱՐԱՐԸ՝ ՇԱՐԺՄԱՆ ՄԱՍԻՆ

**«Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է Արցախի պետնախարար Գուրգեն Ներսիսյանի հետ:**



**-Պարոն Ներսիսյան, հուլիսի 14-ից Արցախում մեկնարկել է համաժողովրդական շարժում, որը որոշակի թափ է ստացել նաեւ Հայաստանի Հանրապետությունում: Ո՞րն է շարժման հիմնական նպատակը կամ նպատակները:**

-Ընդհանուր առմամբ ամեն ինչ շատ պարզ է. Արցախի ժողովուրդը պահանջում է դադարեցնել Արցախի շրջափակումը, Ռուսաստանի Դաշնության խաղաղապահ ուժերից պահանջում է լիարժեքորեն կատարել իր գործառույթները, աշխարհի ուշադրությունն է հրավիրում Ադրբեջանի կողմից արցախցիների նկատմամբ իրականացվող հանցավոր գործողություններին եւ պահանջում պատասխանատվություն ստանձնել Արցախի ժողովրդի կյանքը, անվտանգությունն ու իրավունքները պաշտպանելու հարցում: Հայաստանի Հանրապետության իշխանություններից պահանջում է անքննարկելիորեն հաշվի առնել, որ Արցախը եւ Արցախի ժողովուրդը Ադրբեջանի կազմում չեն կարող լինել: Արցախի ժողովրդի անունից ոչ ոք չի կարող որոշել նրա ճակատագիրը, Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքը իրացվել ու երբեք չի կարող սակարկության առարկա դառնալ, մեր ժողովրդի համար անընդունելի է նշաձողի իջեցման ցանկացած փորձ կամ քայլ:

**-Առաջին իսկ օրվանից ամենատարբեր շրջանակներ նաեւ քննադատում են համաժողովրդական շարժումը, գնահատականներ են ինչեցնում Ձեր ու Արցախի մարդու իրավունքների պաշտպանի հասցեին, քանի որ ընդհանուր ընկալումն այն է, որ շարժման առաջամարտիկները դուք եք: Այսօր**

(երեկ-խմբ.) Արցախի ազգային ժողովի պատգամավոր Դավիթ Իշխանյանը հայտարարեց, որ շարժումը կառավարվում է մի կետից՝ ՀՀ իշխանությունների կողմից: Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ են նման հայտարարություններ արվում, եթե շարժման հռչակված նպատակներից մեկն էլ համերաշխությունը, միասնությունն ու համախմբվածությունն է:

-Ցավոք, մենք ապրում ենք այդպիսի ժամանակներ, երբ քաղաքականությունը, քաղաքական կամ անձնական շահը ոմանց համար գերակա է պետական ու հանրային շահից: Եվ երբ որոշ մարդիկ ուզում են համաժողովրդական շարժումը ծառայեցնել իրենց նախընտրած շահերին, ու չի ստացվում, սկսվում են հնչել նման ամենատարբեր հայտարարություններ: Շարժումը ժողովրդինն է, մենք ընդամենը փորձում ենք այն պահել անբիծ ու մաքուր տեսքով: Գիտեք, շատերը չեն ուզում հասկանալ եւ ընդունել, որ մարդիկ հոգնել են քաղաքականությունից, քաղաքական խաղերից, ներեցե՛ք արտահայտությանս համար, զզվում են այդ ամենից, ուզում են իրական պայքար, բայց դե գտնվում են մարդիկ, որոնք չեն կարողանում հաշտվել դրա հետ, ավելին՝ փորձում են նսեմացնել, արժեզրկել ժողովրդի ցասումը: Կարծում եմ՝ մի մասն էլ պարզապես մոլորության մեջ են՝ հավանաբար բավարար տեղեկություններ չունենալով կամ տարբեր կարծրատիպեր հաշվի առնելով:

Ինչ վերաբերում է պարոն Իշխանյանի հայտարարությանը, ապա ես շատերից կսպասեի նման գնահատական, բայց ոչ նրա նման փորձառու, հավասարակշռված քաղաքական գործչից: Համոզված եմ՝ պարոն Իշխանյանը ամենատարբեր ուժերի կառավարման տակ գտնվող շատ մարդկանց է տեսել, բայց եթե նրա խոսքը վերաբերել է ինձ կամ Մարդու իրավունքների պաշտպան Գեղամ Ստեփանյանին, ապա այն որքան էլ սեփական կարծիքի արտահայտում լիներ, անհիմն է եւ, մեղմ ասած, սխալ: Իրականում, եթե այդ հայտարարության հեղինակը պարոն Իշխանյանը չլիներ, ես լրիվ այլ կերպ կարտահայտվեի դրա առնչությամբ:

Բոլոր ազնիվ քննադատողներին հրավիրում ենք պարզ ու անկեղծ շփման՝ քննարկելու ջանքերի ու ռեսուրսների համատեղման հնարավորությունները: Ցավում եմ, որ նման ծանր իրավիճակում մենք կրկին մասնատված ենք ու չենք կարողանում արդյունավետ կերպով համախմբել բոլորիս ներուժը: Բայց հավաստիացնում եմ Ձեզ՝ անկախ ամեն տեսակի խոչընդոտներից՝ ժողովուրդը հաղթելու է:

*Զրուցեց ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ*

ՊԱՀԱՆՋ

# ԴԻՄԵԼ Է ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

**ԱԺ պատգամավոր Թագուհի Թովմասյանը հայց է ներկայացրել Վարչական դատարան՝ պահանջելով վերականգնել իրեն ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի ղեկավարի պաշտոնում: Այս մասին նա հայտարարեց հուլիսի 24-ին՝ մամուլի ասուլիսի ժամանակ:**



«Լիազորություններից զրկելու գործընթացն անօրինական էր, քանի որ ես հնարավորություն չունեի իմ դիրքորոշումն արտահայտելու: Ես խորհրդարանի նախագահին, ինչպես նաեւ նախագահի պաշտոնակատարին անաշխատունակության տեղեկանք եմ ներկայացրել եւ գրավոր խնդրել եմ հետաձգել հարցի քննարկումը, բայց այն անտեսել են»,- ասուլիսի ժամանակ ասաց Թովմասյանը:

Նա համոզված է, որ Հայաստանում դատարանի միջոցով կկարողանա վերականգնել իր լիազորությունները, հակառակ դեպքում Թագուհի Թովմասյանը պատրաստ է դիմել Մարդու իրավունքների եվրոպական դատարան:

Հիշեցնենք, որ հուլիսի 11-ին իշխող «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը խորհրդարանին է ներկայացրել պատգամավոր Թագուհի Թովմասյանին Հայաստանի Ազգային ժողովի մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնից հեռացնելու մասին որոշման նախագիծ: Թովմասյանին պաշտոնից զրկելու օգտին քվեարկեց 62, դեմ՝ 1 պատգամավոր, ինքը՝ պատգամավորը, նիստին ներկա չի եղել:

Հիշեցնենք, որ ապրիլի 20-ին իշխանական խմբակցության պատգամավոր Հովիկ Աղազարյանը հայտարարել էր Թովմասյանին անվստահություն հայտնելու գործընթաց սկսելու մտադրության մասին այն բանից հետո, երբ ընդդիմադիր պատգամավորը խորհրդարանում ակցիա էր կազմակերպել՝ հայտարարելով, որ չի իջնի ամբիոնից: Նրա իջեցրել էին անվտանգության աշխատակիցները:

Իշխող խմբակցությունը դեմ էր դուրս եկել Թովմասյանին ընդդիմությունից օմբուդսմենի թեկնածության քննարկման ժամանակ իշխանական պատգամավորների մասնակցությամբ լեզվակռվից հետո: Դրանից հետո Թովմասյանին մեղադրեցին, որ նա ընդմիջում չի հայտարարել եւ օմբուդսմենի թեկնածու Էդգար Ղազարյանից ներողություն չի պահանջել, որը հայտարարել էր, թե 2018 թվականին Հայաստանում «ադրբեջանաթուրքական հեղափոխություն» է տեղի ունեցել:

## ԱՇԽԱՏԱՎԱՐՁ ՉԷԻՆ ՍՏԱՑԵԼ

Երեւան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական եւ քրեական դատարանների դատավորները եւ աշխատակիցները՝ ավելի քան 500 հոգի, 54-օրյա դադարից հետո՝ երեկ, վերջապես աշխատավարձ են ստացել: Ինչպես հայտնի է, 2 ամիս է՝ դատավորները արդարադատություն էին իրականացնում անվճար: Նրանք պարտաճանաչ գնում էին աշխատանքի, մինչեւ կեսգիշեր նիստերի մասնակցում, որոշումներ գրում ու տուն գնում՝ մտածելով, թե ինչպես լուծել իրենց տարրական, կենցաղային կարիքները, քանի որ դեռեւս հունվարին Երեւանի դատարանները բաժանվել էին քաղաքացիական եւ քրեական դատարանների, սակայն բյուջեի բաշխվածությունը տարեսկզբին տեղի չէր ունեցել: Եւ քանի որ օրվա քաղաքական իշխանությունը բարեհաճ վերաբերմունք չունի դատական իշխանության նկատմամբ, 6 ամիս շարունակ համապատասխան ենթաօրենսդրական ակտը չէր մշակվում, բյուջեի բաժանում չէր արվում, ավելին՝ կառավարությունը մերժել էր հարցը օրակարգում ընդգրկել: Մամուլում բարձրացված աղմուկից հետո միայն գործադիրը նախորդ շաբաթվա նիստում ընդգրկել էր այդ հարցը: Բայց անկազմակերպվածության արդյունքում միայն երեկ դատավորները կարողացել են ստանալ հունիս ամսվա աշխատավարձը՝ առանց տույժ-տուգանքների: «Բայց կարեւորը իրենց պարգեւավճարները չեն պակասում, իրենց վոյաժների օրապահիկները չեն ուշանում, իսկ դատական համակարգում մարդիկ օդով են ապրում: Հետո էլ կասեն՝ սոցիալական երաշխիքներ, կադրերի ներգրավում, լավագույն պայմանների ստեղծում: Նույն ԲԴԽ-ում, դատական դեպարտամենտում երբ հայտարարում են, թե տեղյակ են խնդրից, քանի՞ օր են պատրաստ անվճար աշխատել: Կամ երբ դատավորը որոշումը մեկ օր ուշացնում է, տեխնիկական վրիպակ է թույլ տալիս, նույն ԲԴԽ-ն առանց աչք թարթելու վարույթ կհարուցի եւ խիստ նկատողություն կհայտարարի, իսկ հիմա 54 օր հետո աշխատավարձ են տալիս, ասես ոչինչ էլ չի եղել դեմքով, առանց տույժ-տուգանքների, առանց ներողության, առանց մեղքի զգացման: Սա էլ եթե լրատվամիջոցների աղմուկը չլիներ, էլի կձգվեր»,-ասում է դատական համակարգի մեր աղբյուրը: Եւ սա միակ խայտառակությունը չէ. իշխանության «անտեր» զավակին՝ դատական համակարգին այնպես են անտեսել, որ օրեր շարունակ դատարանների կազմերի հեռախոսահամարները պարտքի պատճառով անջատված է եղել, այսինքն՝ փաստաբանները, քաղաքացիները տարրական խնդիր ունեին դատարանների հետ կապ հաստատելու, պետությունը պարտքը չէր վճարել: Նորից լրատվամիջոցների աղմուկից հետո դեպարտամենտը վճարել էր պարտքը, եւ հեռախոսները միացվել էին: Ահա սա է Հայաստանի արդարադատության պերճանքն ու թշվառությունը եւ, ահա, թե ինչպիսին է պետական կառավարումը, քաղաքական իշխանության «հոգատարությունը» դատական համակարգի նկատմամբ:

## ՊԱՀԱՆՋՆԵՐ

Հուլիսի 25-ին՝ ժամը 20:00-ին, նախատեսվում է համաժամանակյա հանրահավաքներ Ստեփանակերտի Վերածննդի եւ Երեւանի Ազատության հրապարակներում: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ արցախցիները վաղը կոնկրետ պահանջներ կներկայացնեն ՀՀ իշխանություններին՝ Նիկոլ Փաշինյանին: Համաժողովրդական շարժման մասնակիցները մեծ էկրաններով օնլայն ռեժիմով կկամրջեն երկու հրապարակները՝ միավորելու բոլորիս ձայները եւ վերահաստատելու մեր միասնական պայքարը՝ հանուն Արցախի ապաշրջափակման եւ հումանիտար աղետի վերացման, հանուն Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի հարգման եւ դրանից ցանկացած հետնահանջի դատապարտման: Հավաքը միասնական մասնակցությամբ կարտահայտի հայ ժողովրդի հավաքական կամքն ու Արցախի հարցում արցախցիների անսակարկելի դիրքորոշումը՝ Արցախը եւ Արցախի ժողովուրդը չեն կարող լինել Ադրբեջանի կազմում:

## ՆԱԽԱԳԱՀԻ ԲԱՑ ՆԱՄԱԿԸ

ՀՀԿ ներկայացուցիչներն հուլիսի 24-ին շրջում են Հայաստանում ԱՄՆ-ի, Ռուսաստան եւ Ֆրանսիայի դեսպանատներով՝ նրանց հանձնելու համար ՀՀ երրորդ նախագահ Սերժ Սարգսյանի բաց նամակը՝ այդ երկրների ղեկավարներին:

ԱՄՆ դեսպանատան մոտ ՀՀԿ անդամ Հայկ Դերձյանը նշել է, որ հնարավոր չէ խոսել ժողովրդավարությունից, երբ հնարավոր չի լինում սանձել մի պետության, որը ցեղասպանության է տանում մի այլ ժողովրդի: «Հնարավոր չէ խոսել կյանքի իրավունքից, երբ մեկ պետությունը զրկում է մեկ այլ ժողովրդի այդ իրավունքից: Ադրբեջանին պետք է ցույց տալ իր տեղը, քանզի նման իշխանություն ունեցող պետությունը չի կարող համարվել ժողովրդավարական, նման պետությունը պետք է սանձվի, հակառակ դեպքում մենք տարիներ անց խոսելու ենք նոր ցեղասպանության մասին: Մենք ակնկալում ենք ԱՄՆ-ից գործուն քայլեր: Այդ քայլերում չկա քաղաքականություն, կա կյանքի իրավունքի պաշտպանություն, հայատյացության դեմ հստակ գործընթացներ եւ ժողովրդավարության պաշտպանություն: Հակառակ դեպքում կստացվի, որ ժողովրդավարության մասին հայտարարությունները թղթի վրա են պարզապես»,-ասաց նա:

Ներկաները սկսեցին վանկարկել՝ «Արցախ, Արցախ»:

ԱՄՆ դեսպանատան մոտ ԱԺ «Պատիվ ունեմ» խմբակցության ղեկավար Հայկ Մամիջանյանը լրագրողների հետ զրույցում նշեց, որ Սերժ Սարգսյանի բաց նամակը հանձնվեց ԱՄՆ դեսպանատան ներկայացուցչին: «Նախագահ Սարգսյանի նամակը նոր հույս, նոր հնարավորություն է բացում հայկական երկու պետությունների համար առաջին հայացքից անելանելի թվացող իրավիճակի հանգուցալուծման համար: Ցանկացած դեպքում պետք է առաջին հերթին հասկանալ, թե որն է այդ իրավիճակի ձեւավորման պատճառը: Պատճառը այսօրվա իշխանություններն են, որոնք են հասցրել բանակցային գործընթացը այս իրավիճակին: Դա մանրամասն նկարագրված է նամակում»:

## ԿՐԿԻՆ ՆԻՍՏ ԿԱՆԵՆ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամներն այս շաբաթ կրկին հավաքվելու են: Կուսակցությունը վարչության եւ նախաձեռնող խմբի նիստեր կանի՝ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ:

Ինչպես արդեն հայտնել ենք, այս օրերին իշխող ուժի համար առաջնայինը աշնանը սպասվող ավագանու ընտրություններին պատրաստվելն է. ՔՊ-ականները նիստերին Նիկոլ Փաշինյանի հետ կազմակերպչական աշխատանքների դետալներն են քննարկում՝ ինչպես իրականացնել քարոզարշավը, ովքեր են համակարգելու գործընթացը, որտեղ են շտաբները բացելու եւ այլ հարցեր: Այս բոլոր հարցերը հստակեցվում են ոչ միայն Նիկոլ Փաշինյանի, այլ նաեւ քաղաքապետի թեկնածու Տիգրան Ավինյանի հետ:

ԲՈՂՈՔ

# ՆԱՄԱԿԸ ՀԱՆՁՆՎԵՑ ՄԱԿ-Ի ԳՐԱՍԵՆՅԱԿ

**«Բացում» նախաձեռնության անդամները հուլիսի 24-ին Երեւանում ՄԱԿ-ի գրասենյակի դիմաց բողոքի ակցիա են իրականացրել:**

Նրանք ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակին են հանձնել դիմում-նամակ՝ Արցախը Հայաստանին եւ աշխարհին կապող Բերձորի միջանցքի վերաբացման վերաբերյալ:

ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի համակարգող Նիլս Սքոթին ուղղված նամակում ասվում է. ««Բացում» նախաձեռնությունը, հիմք ընդունելով ՄԱԿ Կանոնադրության նպատակները, սկզբունքներն ու դրույթները, որոնք վերաբերում են միջազգային իրավունքի սուբյեկտ հանդիսացող Արցախի (Լեռնային Ղարաբաղ) Հանրապետության ժողովրդին, քանի որ վերջինս հանդիսանում է սեփական ինքնորոշման համար պայքարող ժողովուրդ, դատապարտելով 2022թ.-ի դեկտեմբերի 12-ից ի վեր Ադրբեջանի ձեռամբ Լաչինի՝ Բերձորի միջանցքը կեղծ էկոակտիվիստների կողմից արգելափակելը, իսկ սույն թվականի ապրիլի 23-ից՝ միջանցքում անցակետ տեղակայելը, խիստ մտահոգված լինելու նաեւ սույն թվականի հունիսի 15-ից հումանիտար բեռների լիարժեք արգելափակման՝ ժամ առ ժամ վատթարացող հումանիտար աղետի փաստով, հղում անելով ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու եւ պատժելու մասին ՄԱԿ 1948 թվականի դեկտեմբերի 9-ի կոնվենցիայի երկրորդ հոդվածում շարադրված գործողություններին, որոնց ակնհայտ գործողություններին է այսօր ականատես լինում ողջ միջազգային քաղաքակիրթ հանրությունը Արցախում եւ Արցախի շուրջը, հիշատակելով Արդարադատության միջազգային դատարանի մի շարք իրավապարտադիր որոշումների պահանջները Լաչինի միջանցքի ապաարգելափակման ու վերագործարկման առնչությամբ, համակարգողներից եւ նախաձեռնությանն աջակցող քաղաքացիների անունից դիմում ենք ձեզ՝ ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի դիմաց հավաքված ողջ հումանիտար բեռը առանց ավելորդ ժամանակ կորցնելու Արցախի ժողովրդին հասցնելու նպատակով:



Հաշվի առնելով ծանրագույն իրավիճակը՝ խնդրում ենք հրատապ կարգով ընդունել հավաքագրված ողջ հումանիտար բեռը եւ փոխադրել Հայաստանից Լաչինի միջանցքով դեպի Արցախի Հանրապետություն:

Այն իրականացնելու թույլտվության տրամադրման ժամանակ ի գիտություն ընդունե՛ք մեր կողմից անհրաժեշտ կամավորական օգնություն ցուցաբերելու պատրաստակամությունը ողջ բեռը ցուցակագրելու, տեսակավորելու եւ փոխադրելու քայլերի շրջանակում»:

Ներկաները վանկարկում էին՝ «Արցա՛խ, քեզ հետ ենք», «Բացու՛մ, միաս՛ում»:

Նշենք, որ ՄԱԿ-ի մոտ արդեն մի քանի օր է՝ քաղաքացիները պաշարներ են բերում, որոնք ՄԱԿ-ի օգնությամբ պետք է կարողանան տեղափոխել Արցախ:

«Շատ են հարցնում, թե ինչպես ենք տեղափոխելու: Այս ամբողջ շարժումը հենց դրա համար է, որ ճանապարհը բացվի: Հաճախ ասվում է, որ ՄԱԿ-ը չի կարող քայլեր ձեռնարկել առանց պետության ուղիղ հայցի կամ դիմումի: Այս ուղղությամբ եւս հետեւողական աշխատանք է տարվում: Մի քանի անգամ փաստաբան Մելանյա Սամոնյանի հետ այցելել ենք ԱԳՆ, փորձել ենք հասկանալ, թե ով է իրավասու ԱԳՆ շենքում, որը պետք է առաջ տանի ՄԱԿ-ի հետ բանակցությունները: Այսօր վերջապես պատասխանատուներից մեկը արձագանքել է, գրի է առել տվյալները, պահանջը քաղաքացիների կողմից»,- ասաց նախաձեռնության անդամ Սեդա Գրիգորյանը: Նախաձեռնության անդամներից Նարեկ Այվազյանը տեղեկացրեց, որ այսօր՝ ժամը 19:00-ին, Ազատության հրապարակում հավաք են իրականացնելու, լինելու է բաց խոսափողի հնարավորություն:

ՕՐՎԱ ԽԾԱՆԿԱՐ

## ԱՆՄԽԻԹԱՐ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԻՆԵՐ

«Ժողովուրդ» օրաթերթը պարբերաբար քաղաքացիներից ահազանգեր է ստանում, որ Երեւանի բոլոր փողոցներում ավտոկայանատեղիները փակված են, եւ դրանց տեղերում, ում ձեռքը ինչ ընկնում է, դնում է: Ահազանգ ստացանք, որ Հայաստանի էկոնոմիկայի նախարարության դիմացի ավտոկայանատեղին անմխիթար վիճակում է, բոլոր հնարավոր կայանման տեղերում դրված են քարեր, աթոռներ, յուղի երկաթյա բանկաներ, պլաստմասե արկղեր:

«Ժողովուրդ» օրաթերթը շրջել է քաղաքում՝ ֆիքսելով քաղաքում տիրող իրավիճակը: Պարզվում է՝ ոչ միայն էկոնոմիկայի նախարարության ավտոկայանատեղին է անմխիթար վիճակում, այլեւ այլ պետական մարմիններինը:

Փաստորեն, Հայաստանում, անընդհատ զարգացման մակարդակի բարձրացումից խոսելուն ու զարգացած երկրների օրինակը բերելուն զուգահեռ, պետական մարմինների բակերում ավտոկայանում կազմակերպվում է փողոցային մակարդակով՝ կայանման տեղերում դնելով յուղի բանկաներ, աթոռներ, քարեր ու մրգերի արկղեր:

*ՄԱՇԱ ՄԵԼՔՈՆՅԱՆ*

## ԲՈՒԺԱՌՈՒՆԵՐ՝ ԱՐՑԱԽԻՑ ՀԱՅԱՍՏԱՆ

Հուլիսի 24-ին ԱՀ առողջապահության նախարարության «Հանրապետական բժշկական կենտրոն» ՓԲԸ-ից 11 բուժառու ուղեկցողների հետ միասին, «Կարմիր խաչի» միջազգային կոմիտեի միջնորդությամբ եւ ուղեկցությամբ, տեղափոխվել են ՀՀ մասնագիտացված բժշկական կենտրոններ:

«Արեւիկ» բուժմիավորումում այս պահին ստացիոնար բուժում է ստանում 20 երեխա, 7-ը գտնվում է նորածնային եւ վերակենդանացման բաժանմունքում:

«Հանրապետական բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում ստացիոնար բուժում է ստանում 76 հիվանդ, 12 բուժառու գտնվում է վերակենդանացման բաժանմունքում, որոնցից 2-ը՝ ծայրահեղ ծանր վիճակում:

## ՄԻԱՑԵԼ Է «ՀԱՅԱՔՎԵ»-ԻՆ

Երեւանի քաղաքապետի թեկնածու Վիկտոր Մնացականյանը նույնպես միացել է «Հայաքվե» նախաձեռնությանը:

Նշենք, որ «Հայաքվե» նախաձեռնության նպատակը Արցախի ինքնորոշման մերժումը քրեականացնող օրենքի նախագծի ընդունումն է, որը կյանքի է կոչելու Հայաստանի քաղաքացիների կամարտահայտության միջոցով: Հիշեցնենք՝ դրանով ծանր պատիժ է նախատեսվում Հայաստանի Հանրապետության անունից Արցախն Ադրբեջանի մաս ճանաչող եւ Հայոց ցեղասպանության նշանակությունը նսեմացնող գործողությունների համար:

ՄԵՂԱԴՐԱՆՔ Է ԱՌԱՋԱԴՐՎԵԼ

# ՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՎԱՔՆԵՐԻՑ ԽՈՒՍԱՓՈՂ ԱՆՁԻՆՔ

**ՀՀ իրավապահները շարունակում են պատասխանատվության կանչել բոլոր այն անձանց, որոնք խուսափում են վարժական հավաքներին մասնակցելուց: Երեք անձի մեղադրանք է առաջադրվել:**



Մեզ հայտնի դարձավ, որ Սաշա Հարությունյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 58-րդ եւ 59-րդ հոդվածների, ինչպես նաեւ ՀՀ Կառավարության 02.02.2023 թվականի թիվ 122-Ն եւ 03.02.2023 թվականի թիվ 039 որոշումների հիման վրա, ենթակա է եղել զորակոչման 04.04.2023 թվականից մինչեւ 29.04.2023 թվականն անցկացվող վարժական հավաքին, սակայն 2023 թվականի մարտի 07-ին ՀՀ ՊՆ եւ ԶՀԾ Արարատի մարզի տարածքային ստորաբաժանումում հրաժարվել է վարժական հավաքին մասնակցելուց, վերոնշյալ վարժական հավաքին չի ներկայացել Արարատի մարզի տարածքային ստորաբաժանում, որպիսի պայմաններում խուսափել է 04.04.2023 թվականից մինչեւ 29.04.2023 թվականը պահեստազորայինների պատրաստության շրջանում հայտարարված վարժական հավաքից՝ այդ վարժական հավաքից ազատվելու՝ օրենսդրությամբ սահմանված հիմքերի բացակայության դեպքում:

Գեղամ Ավագյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 58-րդ եւ 59-րդ հոդվածների, ինչպես նաեւ ՀՀ Կառավարության 02.02.2023 թվականի թիվ 122-Ն եւ 03.02.2023 թվականի թիվ 039 որոշումների հիման վրա, ենթակա է եղել զորակոչման 10.05.2023 թվականից մինչեւ 05.06.2023 թվականն անցկացվող վարժական հավաքին, սակայն 2023 թվականի մարտի 16-ին ՀՀ ՊՆ եւ ԶՀԾ Արարատի մարզի տարածքային ստորաբաժանումում ստորագրելով պարտավորագիր՝ վերոնշյալ վարժական հավաքին չի ներկայացել Արարատի մարզի տարածքային ստորաբաժանում, որպիսի պայմաններում խուսափել է 10.05.2023 թվականից մինչեւ 05.06.2023 թվականը պահեստազորայինների պատրաստության շրջանում հայտարարված վարժական հավաքից՝ այդ վարժական հավաքից ազատվելու՝ օրենսդրությամբ սահմանված հիմքերի բացակայության դեպքում:

Գեւորգ Թագայանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով ՀՀ քաղաքացի, «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 58-րդ եւ 59-րդ հոդվածների, ինչպես նաեւ ՀՀ Կառավարության 02.02.2023 թվականի թիվ 122-Ն եւ 03.02.2023 թվականի թիվ 039 որոշումների հիման վրա, ենթակա է եղել զորակոչման 11.05.2023 թվականից մինչեւ 05.06.2023 թվականն անցկացվող վարժական հավաքին, սակայն 2023 թվականի ապրիլի 04-ին ՀՀ ՊՆ Զ եւ ԶՀԾ Արարատի մարզի տարածքային ստորաբաժանումում հրաժարվել է ստանալ ծանուցագիր եւ վերոնշյալ վարժական հավաքին չի ներկայացել Արարատի մարզի տարածքային ստորաբաժանում, որպիսի պայմաններում խուսափել է 11.05.2023 թվականից մինչեւ 05.06.2023 թվականը պահեստազորայինների պատրաստության շրջանում հայտարարված վարժական հավաքից՝ այդ վարժական հավաքից ազատվելու՝ օրենսդրությամբ սահմանված հիմքերի բացակայության դեպքում:

ՎԱՐՈՒՅԹ

## ԱՌԱՆՑ ՄԱՔՍԱՎՃԱՐԻ ՄՆՈՒՆԴ

ՀՀ քննչական կոմիտեի տնտեսական հանցագործությունների եւ մաքսանենգությունների քննության գլխավոր վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 290-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով նախաձեռնված քրեական վարույթի շրջանակներում պարզվում են խաբեության դրսեւորմամբ առանձնապես խոշոր չափերով մաքսային վճարները չվճարելու դեպքի հանգամանքները:

Վարույթի քննության ընթացքում կատարված բազմածավալ միջոցառումների արդյունքում պարզվել է, որ Ս.Հ.-ն, հանդիսանալով «ԱՐԵՆ-ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության լիազորված անձը եւ ընկերության փաստացի ղեկավարը, պետական բյուջե վճարման ենթակա առանձնապես խոշոր չափերով մաքսային վճարները չվճարելու նպատակով, խաբեության դրսեւորմամբ թաքցրել է հարկման օբյեկտը, արդյունքում չի հաշվարկել եւ պետական բյուջե չի վճարել 170.897.286 ՀՀ դրամի չափով մաքսային վճարներ:

Մասնավորապես՝ Ս.Հ.-ն պետական բյուջե վճարման ենթակա առանձնապես խոշոր չափերով մաքսային վճարները չվճարելու նպատակով, խաբեության դրսեւորմամբ, այն է՝ Իրանի Իսլամական Հանրապետությունից օտարերկրյա իրավաբանական անձի հիմնարկի անվամբ, սակայն փաստացի «ԱՐԵՆ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության կողմից ՀՀ-ում իրացնելու համար 2023 թվականի ապրիլի 15-ին թվով 11 տարանցման հայտարարագրերով Հայաստանի Հանրապետության տարածք է ներմուծել ընդհանուր 283.250կգ բեռ՝ սերուցք եւ կարագ՝ 700.000 ԱՄՆ դոլար մաքսային արժեքով: Ապա Ս.Հ.-ի ցուցումով՝ իրավասու մարմնին ներկայացվել են իրականությանը չհամապատասխանող փաստաթղթեր, համաձայն որոնց՝ իբրեւ թե նշված ապրանքները պատկանում են վերոնշյալ օտարերկրյա իրավաբանական անձին եւ նախատեսված են վերջինիս կարիքների համար: Դրանց հիման վրա՝ ՀՀ մաքսային մարմինը, առանց մաքսային վճարների գանձման, 2023թ. ապրիլի 22-ին 700.000 ԱՄՆ դոլար մաքսային արժեքով 283.250կգ բեռը բաց է թողել «թույլատրված» կարգավիճակով:

Ս.Հ.-ն, մաքսային վճարների հաշվարկման կամ վճարման պարտավորություն առաջացնող գույքի վերաբերյալ խեղաթյուրված տվյալներ ներկայացնելով, թաքցրել է հարկման օբյեկտը:

Նախաքննությամբ ձեռք բերված փաստերի հիման վրա՝ վարույթն իրականացնող մարմինը հսկող դատախազին ներկայացրել է միջնորդություն, եւ վերջինիս ներկայացվել է մեղադրանք՝ ՀՀ քրեական օրենսգրքի 290-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով:

Մեղադրյալը ձերբակալվել է:

Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության քրեական դատարանը վերջինիս նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառել կալանավորումը՝ 2 ամիս ժամկետով:

Նախաքննությունը շարունակվում է:

ՈՒՇԱԳՐԱՎ

## ՓՆՏՐՈՒՄ ԵՆ ՄՈՐԸ

Իրավապահները մտել են Գեղարքունիքի մարզի Ներքին Գետաշեն համայնք ու փնտրում են Մատուռի մոտ հայտնաբերված նորածին երեխայի մորը: «Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ իրավապահները հանել են տվյալներ, որ համայնքը ունի մոտ 2000 բնակիչ, ու այս պահին իրականացվում է մեծածավալ աշխատանք՝ պարզելու, թե համայնքի բնակիչներից ում տանն է հղի եղել: Ավելին՝ քննվում է նաեւ այլ վարկած, որ միգուցե հարակից գյուղից է եղել ծննդկանը:

Նկատենք, որ նախաձեռնվել է քրեական վարույթ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 247-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով (Երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականություններ չկատարելը, որը առաջացրել է ծանր հետեւանք, պատժվում է 1-4 տարի ժամկետով):

SHAMSHYAN.com-ի տեղեկություններով՝ Երեւանի «Մուրացան» բժշկական կենտրոնում մահացել է այսօր Գեղարքունիքի մարզի Ներքին Գետաշեն գյուղի «Սուրբ թաղ» թաղամասի հարեւանությամբ գտնվող մատուռի մոտ հայտնաբերված նորածին տղան:

Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, երեխան «Մուրացան» հիվանդանոց էր տեղափոխվել Մարտունու բժշկական կենտրոնի շտապօգնության բժիշկների ուղեկցությամբ, եւ «Մուրացանի» բժիշկները մի քանի ժամ շարունակ պայքարում էին երեխայի կյանքի համար, որը փրկել չհաջողվեց:

## ԵՎՍ ՄԵԿ ՀՐԴԵՀ՝ ԶՈՐԱՄԱՍՈՒՄ

Պարզվում է՝ Ազատ գյուղում այս տարվա կացարանի հրդեհից առաջ, որը խլեց 15 զինվորի կյանք, եւս մեկ ուշագրավ դեպք է եղել:

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ ՀՀ ՊՆ N զորամասի (Սյունիքի մարզ) կապի վաշտի ռադիոդասակի ռադիոջոկի ռադիոհեռախոսավար, կոչումով շարքային Մարատ Միոյանը 2022թ. մարտի 26-ին՝ «Բիլայն» վերահաղորդիչ կայանում մարտական հերթապահություն իրականացնելիս, թույլ է տվել ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագրքի 16-րդ հավելվածով սահմանված պահանջների խախտում, այն է՝ ցուրտ եղանակին կացարանից հաճախակի դուրս չգալու համար տրվող նյութ հանդիսացող բենզինով լցված պլաստմասե տարան թողել է չնախատեսված վայրում՝ ածուխի վառվող վառարանի մոտակայքում, իսկ երբ նույն օրը՝ ժամը 20:10-ի սահմաններում, ցանկացել է տարայի մեջ լցված բենզինով լիցքավորել բենզոագրեգատը, տարայի փականը բացելուն պես հավաքված գոլորշին արտամղվել է դուրս եւ հասել ածուխի վառվող վառարանին, ինչի հետեւանքով բռնկվել է հրդեհ, եւ կացարանն ամբողջովին այրվել է. ՀՀ ՊՆ N զորամասին անզգուշությամբ պատճառվել է առանձնապես խոշոր չափերի՝ 7.514.772.59 ՀՀ դրամին համարժեք գույքային վնաս. ամբողջական այրվել է տարբեր տեսակի ռազմական գույք:

Ըստ էության, այս դեպքը դաս չի եղել, ու դեպքից ամիսներ անց այրվել է Ազատ գյուղի կացարանը: Այս գործով նախաքննության ավարտ է հայտարարվել, ու գործն ուղարկվել է դատարան:

*Նյութերը՝ ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ*

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հուլիսի 21-ից 24-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 134 դեպք, որոնցից 3-ը՝ նախկինում կատարված:*

ՄԱՐԶ

## ՓԱՇԻՆՅԱՆԻ ՀԱՐՑԸ՝ ԱՐՓԻԻՆ

Իջեւանի գինու, կոնյակի գործարանը Աղստեւի հունը մոտ 30 մետր տեղափոխել, այդտեղ ապօրինի շինարարություն է արել, ապօրինի կենդանաբանական այգի ստեղծել, որտեղ պահվում են ջայլամ, այծյամ եւ այլ կենդանիներ: Այդ կենդանաբանական այգու մասին հայտարարել է Իջեւանի դենդրոպարկի երկարամյա տնօրեն Մեխակ Սայադյանը: Համացանցում այդ գործարանի վերաբերյալ գովազդային տեսահոլովակ կա, ուր ջահել, բարետես մի աղջիկ շրջայց է կատարում գինու, կոնյակի գործարանի տարածքում, նաեւ այլցելում նոր կառուցված տարածքում պահվող վայրի կենդանիներին: Գինու, կոնյակի գործարանը, Աղստեւի հունում խոշոր քարեր շարելով, այժմ վերականգնել է գետից Իջեւանի դենդրոպարկի ոռոգման ջրի սնուցումը, սակայն դենդրոպարկում չորացած շուրջ 1500 հազվագյուտ ծառերն ու թփերը եւ 24 հազար տնկիներն այլեւս չեն կանաչի: Դենդրոպարկի տնօրեն Մ. Սայադյանի վկայությամբ՝ դենդրոպարկին պատճառված վնասը կազմում է շուրջ 5 միլիոն դոլար: ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից մասնագիտական հանձնաժողով չի ստեղծվում՝ դենդրոպարկին պատճառված վնասները գնահատելու համար: 2023թ. հունվարի 16-ին «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի գրասենյակում կայացել է Իջեւանի դոնդրոպարկի տարածքի երկրորդ մասը՝ 5,7 հեկտարը վարձակալության տրամադրելու մրցույթ, որում հաղթել է Իջեւանի գինու, կոնյակի գործարանը: 2023թ. փետրվարի 2-ին «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրեն (այժմ նախկին) Լեւոն Գաբրիելյանի եւ Իջեւանի գինու, կոնյակի գործարանի միջեւ կնքվել է վարձակալության պայմանագիր, 5,7 հա տարածքը, որը դենդրոպարկի մաս է, հատկացվել է գինու, կոնյակի գործարանին հանգստի գոտու վերածելու նպատակով:

Մ. Սայադյանը հայտնեց, որ այդ 5,7 հեկտարից վարարած Աղստեւը կես հեկտարը քշել-տարել է, իսկ մնացած հատվածում մոտ 50 միլիոն դրամի տնկիներ կան, որոնք պետք է իրացվեն, սակայն Իջեւանի գինու, կոնյակի գործարանը դենդրոպարկի աշխատողներին թույլ չի տալիս այդ տարածք մտնել, տնկիներն իրացնել: «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրենի Ժ/Պ Լ. Տեր-Սիմոնյանը Մ. Սայադյանին եւ դենդրոպարկի մնացած 3 աշխատողներին գրավոր ծանուցել է, որ օգոստոսի 20-ից նրանց հաստիքները լուծարվելու են: Սայադյանի եւ դենդրոպարկի 3 աշխատողների ամսական ընդհանուր աշխատավարձը կազմում է 470 հազար դրամ: Մ. Սայադյանը դենդրոպարկի խնդիրները ներկայացրել է 2021թ. ամռանը դենդրոպարկ այցելած, ծննդով Իջեւանից վարչապետ Նիկոլ Փաշինյանին: Սայադյանը ցույց է տվել գետի հունում գինու, կոնյակի գործարանի կողմից կառուցող մեծ պատը եւ հարցրել, թե ինչ է լինելու այդ գործը: Նիկոլ Փաշինյանը, որն այդ ժամանակ կապելիս է եղել իր փոքր աղջկա կոշիկի քուղը, հարցրել է երեխային.

-Հը՞, Արփի՛, ի՞նչ կարծիքի ես...

Դրանից մեկ ամիս անց Սայադյանին ազատել են աշխատանքից, սակայն նա, դատարան դիմելով, դատարանի որոշումով վերականգնվել է պաշտոնում: Իջեւանի դենդրոպարկը 1961թ. է ստեղծվել, հետո զարգացել է Սայադյան ընտանիքի 3 սերնդի ջանքերով, այդ ընտանիքի միջոցներով. Մեխակ Սայադյանը մտադիր է մինչեւ վերջ պայքարել դենդրոպարկը փրկելու համար:

*ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ*
*Տավուշ*

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

# ՄԵԾ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ՈՒ 4 ԲՆԱԿԱՐԱՆ

**ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանի տեղակալ Արթուր Հովսեփյանը ՀՀ պետական եկամուտների կոմիտեում բաժնի պետ լինելուց հետո քայլում է այնտեղ, որտեղ Արայիկ Հարությունյանն է: Սկզբում ԿԳՄՍ նախարարի խորհրդական էր, հետո՝ Գիտության կոմիտեի գլխավոր քարտուղար, ապա՝ 2021 թվականից, երբ Հարությունյանը նշանակվեց վարչապետի աշխատակազմի ղեկավար, Հովսեփյանը նշանակվեց աշխատակազմի ղեկավարի տեղակալ:**



Հովսեփյանը թեեւ հեղափոխությունից առաջ էլ աշխատում էր Ֆինանսների նախարարությունում, այնուամենայնիվ 2019 թվականին ձեռք է բերել մեկ բնակարան եւ մեկ ավտոկայանատեղի Երեւանի Արաբկիր վարչական շրջանում:

Հովսեփյանը հայտարարագրել է մեկ մեքենա՝ 2014 թվականի արտադրության, Nissan մակնիշի, որ ձեռք է բերել 2017 թվականին:

Նրա բանկային հաշիվների մնացորդները կազմել են 190 հազար դրամ, իսկ կանխիկ դրամական միջոցները՝ 400 հազար դրամ:

Հովսեփյանի հաշվետու տարվա եկամուտները կազմել են 17 մլն 597 հազար դրամ, որից 15 մլն 459 հազարը աշխատանքի վարձատրություն է վարչապետի աշխատակազմից:

Արթուր Հովսեփյանը ձեռք է բերել հիպոտեկով բնակարան՝ 23 մլն արժողությամբ, Արաբկիր վարչական շրջանում: Ըստ այդմ՝ ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացել է 2 մլն՝ եկամտահարկի վերադարձի օրենքի շնորհիվ:

Հովսեփյանը ծախսեր բաժնում նշել է միայն վարկի մարմանն ուղված ծախսեր՝ 4 մլն դրամ:

Արթուր Հովսեփյանի կինը՝ Աննա Ստեփանյանը, 2016 եւ 2018 թվականներին ձեռք է բերել բնակարան՝ մեկը՝ Ավանում, մյուսը՝ Կենտրոն վարչական շրջանում: Բնակարանները համատեղ սեփականությամբ են, սակայն դրանց սեփականատեր չի համարվում Արթուր Հովսեփյանը:

Կնոջ բանկային հաշիվների մնացորդները կազմել են 773 հազար դրամ, իսկ կանխիկ գումարը՝ 1մլն 200 հազար դրամ:

Կնոջ տարեկան եկամուտները կազմել են 33 մլն 201 հազար դրամ, որից 4 մլն 296 հազար դրամը ՀՀ ֆինանսների նախարարությունից է, եւ կրկին՝ եկամտահարկի վերադարձի օրենքով: Հիպոտեկով ձեռք բերված բնակարանն արժե 49 մլն 741 հազար դրամ. բնակարանը գտնվում է Կենտրոն վարչական շրջանում:

Հովսեփյանի կնոջ եկամուտները կազմել են 33 մլն 201 հազար դրամ, որից 28 մլն 905 հազար դրամը աշխատանքի վարձատրություն է «Սիներջի Սիսթեմս» ՍՊԸ-ից: Ըստ ամուսնու հայտարարագրի՝ Աննա Ստեփանյանը «Սիներջի ինթերնեյշնլ սիսթըմզ» ընկերության հայկական մասնաճյուղի տնօրենն է:

*ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Գ.

